


կուած ըլլալուն հետեւանքով, փոքր շինուած են: Այս երկու մուտքերէն զատ, երկու պատուհաններ տակաւին ունին մէյմէկ անցք դէպի դուռը, և մէյմէկ արտաքին դուռ: Աջակողմեանին մէջ է մկրտութեան տաղանը, ո՛չ թէ որմին մէջ խրուած,



(թիւ 42) Արեւմտեան պահարանի դուռ մը

ինչպէս սովորութիւն եղած է ընդհանրապէս, վերջին տարիներու ըթացքին, այլ ըստ հին ըմբռնումի մէջտեղը կանգնուած, կճեայ, գեղեցկադանդակ: Չախակողմեանը, որ սարկաւազատունն է, ունի սանդուխային անցք մը, որ կ'հանէ դէպի սեղանին ետեւը, և ուրիշ մը, որ կ'իջեցնէ բնմին ներքեւի